Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1165

1166
1167

1168
1169

891 · 715
L - 90

1153

153

891.71Մ

4 γ.

ԳԶԵՊԿԻՆ-ԿՈՒՊԵՐՆԻԿ

ԵՕԿԻՆ ԵՒ ԵԱԿԻՆ

Թարգմ. ռուսերէնից

Շ. Տէր-Նիկողայոսեանց

677

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Ընկ. Վէլեամին., № 7.

1909

38070 սկ

ՀԵՏԱԳԻՏ ՖՐՈՒՆԶԵԻ
անվան գրադարան
ՀՍՍՌ-ում

21212-60
(8133-56)

ԵՕԿԻՆ ԵՒ ԵՍԿԻՆ

Փոսկրից շինած երկու փոքրիկ փղեր էին սոքա— այնքան փոքրիկ, որ հազիւ մի մատնոցի չափ էին. բայց բոլորովին իսկական փղի նման կնճիթները երկար, ականջները կախուած, փոքրիկ փուշերով և դուրս ցցուած ժանիքներով, մի խօսքով այնչափ զեղեցիկ, որ հաճելի էր նայել։

Այդ երկու փոքրիկ փղերին շինողը ապրում էր Եապոնիայում, մի փոքրիկ, շատ փոքրիկ տան մէջ։ Տանը համարեա ոչ մի կահ կարասի չկար. յատակին գը-

ցած էր յարդեայ զոյնզգոյն փսիաթներ, կար և մի քանի կարմիր և սև փայտից շինած փայլուն ապիկած աթոռակներ, նկարազարդած ոսկեգոյն ծաղիկներով և թռչուններով։

Տնեցիք ամենքը նստում էին յատակին, իսկ ցածիկ աթոռակների վրայ դընում էին թէյի ճենապակեայ գաւաթները և ճաշի ամաններըը։ Յատակը միշտ մաքուր էր, որովհետև ներս մտնողը դրան մօտ հանում էր փայտեայ կօշիկները և մտնում էր ապիտակ գուլպաներով։ Սենեակները մէկը միւսից բաժանվում էին ոչ թէ պատերով և դռներով, ինչպէս մեզ մօտ, այլ շարժական շիրմաներով, որ նոյնպէս նկարազարդած էին գեղեցիկ նկարներով, և երբ կամենում էին սենեակը մեծացնել, կամ փոքրացնել տեղափոխում էին միայն շիրմաները։ Այդպէս տունը ունենում էր այնքան սենեակ, որքան պէտք էր լինում։ Մահճակալներ նոյնպէս չկային, քնում էին փսիաթների վրայ, իսկ գլխի տակ դընում էին ցածիկ փայտեայ բաներ գլխի

համար յարմարեցրած տեղերով։ Եապո-
նացիք մեզ պէս չեն ճաշում. սեղան չեն
գցում, ամեն մէկի համար առանձին
ապսէ, դանակ, գդալ, պատառաքաղ և
այլն չեն դնում, այլ փոքրիկ գաւաթ-
ների մէջ ապիկած փայլուն մատուցա-
բաններով բերում են պատրաստի կը-
տրատած կերակուրը, որ ուտում են ձո-
ղիկներով։ Մեզ համար այս բոլորը օ-
տարոտի է, բայց ամեն մի երկիր ունի
իր սովորութիւնները և Եապոնացու
փոքրիկ տղան Եօկին և փոքրիկ աղջիկը
Եակին համարում էին այս բոլորը տա-
վրական և շատ կը զարմանային, եթէ
նրանց պատմէին, որ ուրիշ երկիրներում
երեխաները նստում են բարձր աթոռ-
ների վրայ, քնում են ցանցապատ մահ-
ճակալների մէջ և ուտում են սուր
դանակի և պատառաքաղի օգնութեամբ։

Եօկին և Եակին առողջ էին, ուրախ
և բախտաւոր։ Եապոնիայում շատ են
սիրում երեխաներին և մանկութիւնը
նրանց կեանքի ոսկէ դարն է։ Երեխա-
ները տարին մի քանի անգամ ունեն

իրանց սեպական տոները։ Այդ տոներին նրանց համար շինում են շատ հեռաքրքիր և զուարճալի խաղալիքներ և մեծերը շատ սիրով խաղում են փոքրերի հետ և զբաղեցնում նրանց։ Այդ տոներին հաւասարապէս զուարճանում են և հարուստը և աղքատը և գործ ունեցողը և անգործը։ Եօկիի և Եակիի հայրը թէև զբաղուած մարդ էր—նա քանդակում էր և փայտից շինում զանազան բաներ—բայց և այնպէս նա զբաղվում էր և խաղում երեխաների հետ և շատ հեռաքրքիր պատմութիւններ պատմում։ Նրանց տունը գտնվում էր մի այգում, որտեղ զարնանը ծաղկում էին կեռասը և խնձորը վարդագոյն—սպիտակ ծաղիկներով և շքեղազարդ նունուֆարը և մատուտակը իրանց բոլոր գոյներով։ Փոքրիկ առուն, որ հոսում էր տան մօտով ունէր մի կամուրջ, որի մօտ բուսել էր ստուերախիտ լայնոտ ուռենին։ Այս ուռենու տակը հայրը աշխատում էր, իսկ Եօկին և Եակին պտըտվում էին նրա շուրջը. վիշապ էին բաց թողնում, հօր

շինած նաւակներից մի ամբողջ նաւատորմիղ էին կազմում, նաւակների մէջ նստեցնում էին մատուռակներից շինած տիկնիկներ, որոնց թերթիկները յետ էին ծալում շրջազգեստի ձևով։ Երբ յոգնում էին խաղալուց, Եօկին և Եակին նստում էին հօր մօտ և նայում, թէ ինչպէս նա փայտից և փղոսկրից քանդակում է զանազան իրեղէններ, կենդանիներ, տնակներ, մարդիկ և այլն։ Յետոյ մայրը բերում էր այդտեղ նրանց թերթև ճաշը, մի փոքր խաշած բրինձ, անուշահոտ թէյ, հիւթալի պտուղներ և այլն։ Ճաշից յետոյ հայրը հանգստանում էր, ծխելով իր ծըխամորճը և պատմութիւններ էր անում երեխաներին։

Մի անգամ նա փղոսկրից քանդակեց երկու փոքրիկ փիղ։ Որչափ գեղեցիկ էին այդ փղերը. նրանք հէնց միանգամից դուր եկան Եօկին և Եակին։ Կենդանի փղեր նրանք երբէք չէին տեսել, պատճառ Եապոնիայում փղեր չկան, բայց հայրը պատմել էր, թէ ինչպէս

խելօք կենդանի է փիղը և որչափ բարի, չնայելով որ շատ մեծ է։

—Է՛կ, այս փղերի անուններըդ նենք Եօկի և Եակի, ինչպէս մեր անունն է, ասաց Եօկին քրոջը։

—Է՛կ, ուրախացաւ աղջիկը։—Այ, տես, այս, որ մի քիչ աւելի փոքր է, թող լինի Եակի։ Լաւ։ Եւ այդ օրից փղերը կոչուեցին Եօկի և Եակի։ Նրանք իրանց փոքրիկ խելօք աչքերով այնպէս էին նայում երեխաներին, որ կարծես հասկանում էին թէ կրում են երեխաների անունները։ Փոքրիկ փղերը լաւ էին ապրում։ Նրանց դրել էին բամբուկի մի զեղեցիկ ձողի վրայ պատուհանի մօտ, որտեղից ներս էր մտել խնձորենու ծաղկած ճիւղը։ Անուշահոտ զեփիւռը փչում էր դէպի ներս և զովացնում փղերին, իսկ փոքրիկ մանուկները անդադար շրփում էին նրանց սպիտակ մէջքերը։ Փղերը կարծում էին, թէ իրանց ամբողջ կեանքը այդպէս էլ կանցնի, միշտ միասին կը լինեն, միշտ այդպէս կը հրճուեն երեխաների փաղաքշանքներով և պայ-

ծառ արևի տաք ճառագայթներով։ Իսկ լուսնկայ գիշերները, երբ հովտում ամեն ինչ կը քնի, կսկսեն մեղմիկ զրուցել հեռու Հնդկաստանի, իրանց հայրենիքի հրաշալիքների մասին, ուր բուսնում են փառահեղ արմաւենիները և սրբազան Գանգէսի ալիքներում արտացոլվում են լոտոսի կապոյտ ծաղիկները։ Այդպիսի գիշերները Գանգէսի ջրերում գնում են լողանալու վայրի փղերի ահագին հօտերը։

Եօկին և Եակին շատ հետաքրքրվում էին փոքրիկ փղերի ապագայով և հարցնում էին հօրը։

—Հայրիկ, ի՞նչ պէտք է անես Եօկիին և Եակիին։ Նրանք գիտէին, որ հայրը հարուստ չէ և չէ կարող իր բաւականութեան համար նստել և քանդակել։ Նա այդ անում էր ծախելու համար և այդ է պատճառը, որ իրանք տուն ունեն ծաղկափթիթ այգու մէջ, հագնում են գոյնզգոյն շորեր և միշտ բրինձ են ուտում ճաշին։

—Դու փղերին ո՞ւմ ես ծախելու, հարցնում էին անդադար։

—Հեռու, հեռու երկիրներ, որ գըտնվում են մի քանի ծովերի յետևում, իսկ այդտեղից նրանք կը շրջեն ամբողջ աշխարհը։

—Իսկ եթէ նրանց յանկարծ բաժանեն միմեանցից, հարցրեց Եօկին։ Այդ միջոցին Եակին վախից բարձրացրեց նրա վրայ իր սև աչքերը և ասաց.

—Չի կարելի նրանց բաժանել, Եօկին և Եակին շատ են սիրում միմեանց։

Փոքրիկ փղերն էլ երբէք չէին կարող մտածել, որ կարող են երբ և իցէ բաժանուել միմեանցից։

Վերջապէս մի օր եապոնացին վերցրեց ձողի վրայից Եօկիին և Եակիին, որ տանի ծախելու։ Փղերը թէև տխրեցին, որ բաժանվում են Եօկիից և Եակիից, սակայն նրանց ուրախացնում էր այն միտքը, որ գոնէ միասին են լինելու։

—Մենք երբէք չենք բաժանուիլ, Եօկի։

—Երբէք, Եակի։

Ասացին փղերը և իրանց մտքում հրաժեշտ տուին հայրենի տանը և երեխաներին։ Երեխաները չը տեսան, թէ որքան տխրութիւն էր պարունակվում փղերի փոքրիկ աչքերի մէջ։ Եօկին և Եակին իրանք արդէն շատ տխրել էին, որ բաժանվում են Եօկիից և Եակիից։

Եւ ահա մեր փղերին բամբակով փաթաթած դրին մի արկղի մէջ։ Նրանք այդպէս երկար ճանապարհորդեցին ծովով, յետոյ երկաթուղիով։ Պառկած մութ արկղի մէջ Եօկին և Եակին կամացուկ խօսում էին միմեանց հետ և աշխատում էին ներկայացնել իրանց այն երկիրները, որոնցով անցնում էին։ Նրանք այնքան էլ տրտում չէին, բայց և այնպէս շատ ուրախացան, երբ վերջապէս դուրս եկան արկղից եւ տեսան իրանց ընկած մի շքեղ լաւ լուսաւորուած խանութ, որտեղ կային բազմաթիւ խաղալիքներ և մանր-մունր առարկաներ։ Փղերի աչքերը շլացան, երբ տեսան այդչափ զանազան բաներ։ Խանութում կային և կենդանիներ, և թիթեռներ, և ծաղիկներ, և տիկնիկներ, մի խօսքով ամեն տեսակ բան, ինչ կարելի է երևակայել։ Նրանք հանդիպեցին և փղոսկրեայ մարդկանց, ինչպիսին շինում էր եապոնացին, և շատ ուրախացան։

—Ա՛, բարև երկրացիք, ողջունեցին փղոսկրեայ մարդիկը, ինչպէս երևում է

դուք մեր հայրենի Եապոնիայից էք եկել։ Պատմեցէք, ինչ կայ այնտեղ։ Արդեօք, ծաղիկները դարձեալ առաջուայ նման ծաղկում են, իսկ մեծ-մեծ հովհարները, ինչպէս թիթեռներ, շարժում են իրանց թեւերը, իսկ սոսինների և բամբուկի կանաչի մէջ վառվում են վիշապներով նկարազարդած գոյնզգոյն լապտերները։ Փղերը պատմեցին բոլորը, ինչ որ գիտէին և ապա հարցրին։

—Ասացէք, իսկ մենք այժմ որտեղ ենք գտնվում։

—Ռուսաստանում, Պետերբուրգում։ Ինչպէս տեսնում էք այստեղ շատ ցուրտ է և մռայլ։ Առաւօտից ճրագները վառվում են։ Մենք այստեղ երբէք չենք տեսնում իսկական ծաղիկներ, այլ միայն կեղծ ծաղիկներ և սատիկ տրխրում ենք։ Մենք միայն մտածում ենք, թէ երբ կը լինի այն օրը, որ մեզ կը գնեն և կը հանեն այս բանտից։

—Ինչպէս, դուք այս շքեղ կացարանը բանտ էք անուանում։

—Ա՛յ, ապասեցէք, հէնց որ ձեզ էլ կը

փակեն ապակեայ պահարանի մէջ, դուք այնքան էլ ուրախ չէք լինիլ։

Յիրաւի փղերին դրին շուտով պահարանի մէջ։ Նրանք այնտեղ շատ երկար մնացին, բայց որովհետև միասին էին, այնքան էլ չէին տխրում։ Նայում էին, ով է մտնում խանութ, ով է դուրս գալիս, դիտում էին, ով ինչ է գնում և հետզհետէ հրաժեշտ էին տալիս իրանց դրացիներին։ Մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ գնեց մի կրիայ և շատ ուրախացաւ. մի ինչ որ գիմնազիստ հանդիսաւոր կերպով դուրս տարաւ խանութից մի կոկորդիլոս, մի ծերունի էլ գնեց բոլոր փոքրիկ մարդուկները։

—Իսկ մեզ ով կը գնի, մտածում էին Եօկին և Եակին։ Այցելուներից մի քանիսին նրանք հաւանում էին, իսկ մի քանիսին ոչ։

Ա՛յ, այդ տիկնոջ մօտ ես ուրախութեամբ կը գնայի, ասաց մի անգամ Եօկին, տեսնելով մի գեղեցիկ տիկին, որ կանգ առաւ իրանց առաջ։ Տե՛ս ինչ գեղեցիկ հեզահամբոյր դէմք ունի այս

տիկինը. նա այնպէս արհամարհանքով չէ շպրտում առարկաները, ինչպէս այն տիկինը, որ երեկ կապիկներ էր գնում։

—Այո՛, նա ինձ էլ է դուր գալիս, ասաց Եակին և յանկարծ երկուսն էլ վեր թռան։ Խանութպանը վերցրեց Եօկին և տուեց տիկնոջ։ Տիկինը նայեց իր գեղեցիկ, խոշոր կապոյտ աչքերով ժպտաց և ասաց.

—Խնդրեմ, ահա՛, այս տուեցէք ինձ։

Աստուած իմ, այս ինչ պատահեց մեր փղերին։ Եակին խոր հառաչեց։

—Ինձ էլ, ինձ էլ, բացականչեց Եակին և այնպէս առաջ ընկաւ, որ մինչև անգամ վայր ընկաւ դարակի վրայից և ընկաւ Եօկիի մօտ։ Բայց ոչ ոք բացի Եօկիից չլսեց նրա աղաչանքները, իսկ Եօկին կարողացաւ միայն ղրնչել յուսահատ ձայնով։

Մնաք բարեաւ Եակի, մնաք բարեաւ յաւիտեան։ Եօկիին փաթաթեցին թղթի մէջ և տուին տիկնոջը։ Տիկինը գնաց իր հետ տանելով Եօկիին, իսկ խեղճ փոքրիկ Եակին մնաց միայնու-

թեան մէջ։ Եակիին նորից դէրին պահա-
բանը, նա լալիս էր, լալիս անդադար,
նա ողբում էր իր թանկագին բարեկա-
մի կորուստը։

Տիկինը, որ գնեց Եակիին տարաւ և
ընծայեց մի ուրիշ տիկնոջ։ Վերջինս
շատ ուրախացաւ և իսկոյն Եակիին կա
խեց իր ժամացոյցի շղթայից։ Նա Եա-
կիի հետ շատ քնքոյշ էր վարվում և ան-
ուանում էր գեղեցիկ։ Սակայն ինչ
փոյթ Եակիի համար տիկնոջ քնքշութիւն-
ները, երբ ամբողջ ժամանակ նա մտա-
ծում էր Եակիի մասին։

Մի քանի օր նա այդպէս տառա-
պեց տիկնոջ շղթայի վրայ, վերջապէս
վճռեց փախչիլ և գտնել իր ընկերին։
Մի անգամ օգտուեց դէպքից, երբ տի-
կինը հիւր էր գնացել և խոսակցութեան
միջոցին կտրուեց շղթայից և ընկաւ յա-
տակի վրայ։ Տիկինը չը նկատեց։ Սա-
կայն խեղճ Եակին ճանապարհ չգիտէր,
նա մոլորուեց, ընկաւ մի անկիւն և մը-
նաց մթութեան և անյայտութեան մէջ,
ամենքից մոռացուած։

Տիկինը երբ տուն վերադարձաւ նայեց շղթային և տեսաւ, որ փիղը չկայ, սաստիկ տխրեց և պատմեց այդ մասին իր բարեկամուհուն, որից նուէր էր ստացել։

—Ոչինչ, ես ձեզ կընծայեմ մի ուրիշը, որ բոլորովին նման է առաջինին, մխիթարեց բարեկամուհին, ես տեսել եմ այն խանութում մի ուրիշ այն տեսակ փիղ։

Եւ ահա, գեղեցիկ տիկինը խոշոր կապոյտ աչքերով գնաց նորից խանութ, որտեղ դարակի վրայ տխուր և միայնակ կանգնած էր Եակին։ Նրա աչքերը այնպէս պղտորուել էին շատ լաց լինելուց, որ մինչև անգամ չըտեսաւ, թէ ով գընեց իրան։ Եակին սառնասիրտ թոյլ տուաւ, որ իրան փաթաթեն թղթի մէջ և միանգամայն հնազանդուեց ճակատագրին։ Չէ որ նրա համար միևնոյն էր, չէ որ այլ ևս չէր տեսնելու իր սիրելի ընկերին, մտերիմ Եակինին։

Տխուր և տրտում նայեց Եակին իր նոր տանտիկնոջը, ուշադրութիւն չդարձնելով կանաչագոյն ուրախ սենեակի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
ՀՍՍՀ-ԱՌՆ. ՍՍՀ
Ս. ԱՌ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ
ԱՆՎԱՆ ԱՆՎԱՆ
8/133-56

վրայ, որ լիքն էր ծաղիկներով և մանր առարկաներով և սկսեց ապրել այն շըղթայի վրայ, որից շատ ժամանակ չէր, ինչ կտրուել էր Եօկին։

Տիկինը շուտով գնաց զբօսնելու և մտաւ այն ծանօթի մօտ, որտեղ կորցրել էր Եակին։ Ծանօթը ուրախ դիմաւորեց նրան և ասաց.

—Գիտէք, ինչ պէտք է ցոյց տամ ձեզ։

—Ի՞նչ, ի՞նչ, ասացէք տեսնեմ։

—Դուք անցեալ անգամ ինձ մօտ կորցրիք ձեր փոքրիկ ապիտակ փիղը, մենք գտանք բազմոցի անկիւնում։

—Ի՞նչ էք ասում, պատասխանեց ուրախ ձայնով տիկինը։—Այժմ ես երկու փիղ կունենամ։

Նա վերցրեց փոքրիկ փախտականին և հագցրեց շղթային և ինչ զարմանք Եակին տեսաւ Եօկին և երկուսը ուրախութիւնից կարկամեցին։

Մինչ տիկիններըը զբաղուած էին զբոյցով, մեր փղերն էլ ժամանակ չը կորցրին, իսկոյն պատմեցին միմեանց իրանց գլխի եկածը և խօսք չէին գըտ-

նում, թէ ինչպէս արտայայտեն իրանց գոհունակութիւնը մի այդպիսի հրաշալի և անապատելի հանդիպումի համար։

Երբ նրանք տուն վերադարձան և կանգնեցին կանաչ դարակի վրան, որի մօտ կար մի եապոնական շիրմայ ասեղնագործ ծիծեռնակներով և ծաղիկներով, հախճապակեայ մի ծաղկաման վարդագոյն մատուտակով, Եօկին և Եակին կարծեցին, որ հեռու հայրենիքումն են գտնվում։

Եւ երբ գիշերը լուսինը դուրս եկաւ և նայեց լուսամուտից, նա իր փայլուն լոյսով լուսաւորեց աշխարհիս երկու ամենաբախտաւոր փղերին։

Այն օրից Եօկին և Եակին ապրում են միասին և այլ ևս երբէք չեն բաժանուել միմեանցից։ Եւ գիշերները, երբ ամենքը քնում են, փղերը հանդարտ պատմում են փարթամ Ցէյլօնի, հրաշալի Հնդկաստանի, գեղածիծաղ Եապոնիայի և դառնաշունչ մառախլապատ Պետերբուրգի մասին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Հայ. Մասնաճյուղ

[5 r.)